

3164



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիոյան

«19» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 067 - 25

Նախաձեռնող՝

«Հայգյուղչիննախագիծ» ՍՊԸ
Ք. Երևան Կիկյան 16

Գործունեությունը՝

Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցում
Լոռու մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 067 - 25

«19» *Տեպտեմբեր* 2025թ.

Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հայգյուղիննախագիծ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	« Բ » կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Սպիտակ բնակավայր

Ներածական մաս. «Հայգյուղիննախագիծ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրում կառուցել 576 աշակերտի համար միջնակարգ դպրոց: Գործունեությունն իրականացվում է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ № 06092024-06-0075, ծածկագիրը՝ 06-006-0098-0016, Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից 28.11.2024թ.-ին № ՆԹ 1864 տրված նախագծման թույլտվությունը:

Կառուցապատվող հողամասի նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Երևանյան խճուղի 44/4 հասցեում տեղակայված հողամասի սահմաններում, որի մակերեսը կազմում է 1.92077 հա՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների



պետական գրանցման վկայականի՝ քաղաք Սպիտակի հետերկրաշարժյան (1988թ.) կառուցապատված տարածքում գործող թիվ 8 դպրոցի հարևանությամբ, կամ քաղաքի ծայր հարավարևմտյան թաղամասում: Նախատեսվող նոր դպրոցի տարածքն իրենից ներկայացնում է որոշակի թեքությամբ տարածք, որտեղ ծառեր չկան: Համաձայն ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների եզրակացության՝ տեղամասում ստորերկրյա ջրերը բացակայում են:

Ֆիզիկատեխնիկական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներատեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն գնահատման հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել՝ նոր դպրոցի շենքի կառուցում՝ գոյություն ունեցող դպրոցի տարածքի հարևանությամբ:

Համաձայն նախագծային լուծումների դպրոցը նախատեսված է լինելու մինչև 576 աշակերտի համար: Նախատեսվող դպրոցական համալիրն ունի ծավալահատակագծային բարդ ձև, ուստի մասնաշենքերը միմյանցից բաժանված են հակասեյսմիկ կարերով:

Դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 2529 մ², որը բաղկացած է 5 մասնաշենքերից, որոնք կազմում են ամբողջական համալիր: Դպրոցի տարածքում նախատեսված է նաև 37.5 մ² կառուցապատման մակերեսով կաթսայատուն:

Մասնաշենքեր 1 և 2. այս երկու ուսումնական մասնաշենքեր եռահարկ են, որոնք հանդիսանում են ուսումնական մասնաշենքեր՝ ներառելով դասասենյակները, լաբորատորիաների համակարգը և գրադարանը: Այս մասնաշենքերը միմյանց հետ կապված են 5 մետրանոց միջանցքով և ռեկրեացիայով:

Մասնաշենք 3. եռահարկ է, որի առաջին հարկում ճաշարանն է՝ իր սպասարկման գոտիներով: Այս մասնաշենքում են տեղակայված նաև ֆոյեն և հանդիսությունների սրահը:

Մասնաշենք 4. երկհարկ շինություն է, որում ներառված են սպորտդահլիճը սպասարկող համակարգերը՝ մարզիչի սենյակը, հանդերձարանները, ցնցուղարանները, սպորտգույքի սենյակը:

Մասնաշենք 5. մեկ հարկանի շինություն է, որն իրենից ներկայացնում է սպորտդահլիճը, որի տակ տեղակայված են հրաձգարանը, ձեռնամարտի դահլիճը և սպասարկող սենյակները: Դպրոցական համալիրն ունի ներքին բակ, որի վրա են բացվում ռեկրեացիոն գոտիների պատուհանները և պատշգամբները, և այն անմիջապես կապված է նաև ճաշարանի մեծ սրահի հետ:

Առաջին հարկում տեղակայված են I-V դասարանի աշակերտների համար գոտևորված դասասենյակների զբաղեցրած մակերեսները, արհեստանոցը, ճաշարանը, որոնք ապահովված են բակի կողմից առանձին մուտքով: Այս հարկում է տեղակայված նաև ուսուցչանոցը, բուժկետը, սանհանգույցները: Առաջին հարկը ապահովված է ռեկրեացիոն գոտիներով, որոնք ծառայում են որպես զրուցարաններ:

Առաջին հարկում է տեղադրված սպորտդահլիճին սպասարկող բոլոր հարմարությունները: Առաջին հարկի ճաշարանից և ռեկրեացիոն գոտուց ապահովված է ազատ մուտք դեպի ներքին բակ, որը իր ծավալով կապարտի դպրոցի մշակութային կյանքի կազմակերպմանը:



Երկրորդ հարկի առանձին թերում նախատեսվում է V-VI և VII-IX դասարանների աշակերտների ուսուցումը:

Երկրորդ հարկում տեղադրված են ուսուցչանոցը, տնօրենի սենյակը և ադմինիստրատիվ բլոկն՝ իր առանձին զուգարաններով, ինչպես նաև մեթոդական սենյակը: Երկրորդ հարկի հատակագծային կարևոր հանգույց է հանդիսանում հանդիսությունների դահլիճը, որի բեմը ապահովված է թատերական դեկորացիաների սենյակով, դերասանական հանդերձարանով և ապակեպատ վիտրաժով մասնակցում է ներքին բակի ձևավորմանը: Ըստ աշխատանքային նախագծի ճարտարապետական լուծումների բեմի ապակեպատ հետնապատը նախատեսվում է կառուցել շարժական, որը հնարավորություն կտա ներկայացումներ կազմակերպել ներքին բակում:

Երրորդ հարկում տեղակայվելու են VII-IX դասարանի աշակերտների համար նախատեսված սենյակներ, մասնավորապես՝ նկարչական և երաժշտական ստուդիաներ, ինֆորմատիկայի սենյակներ, ինժեներական լաբորատորիա: Այս հարկում առկա է նաև ռեկրեացիոն բաց հարթակ, որը ևս կարող է ծառայել դասեր, պարապմունքներ և տարբեր այլ միջոցառումներ անցկացնելու համար: Այդ տարածքն ապահովված է երկու շվաքարանով և առանձին մուտքով դեպի տանիքի ծավալում տեղակայված ապակեպատ բուսաբանական լաբորատորիա:

Դպրոց ունի նաև նկուղային հարկ 1031.2 մ², որը օգտագործվելու է որպես թաքստոց:

Դպրոցի ողջ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Բակային հատվածում նախատեսվում են կառուցել ջերմոցներ, հրդեհամարման ջրի կուտակման համար նախատեսված 2 ռեզերվուարներով, սպորտային մարզադաշտ, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք: Դպրոցական համալիրը ապահովված կլինի երկու վերելակներով, հատուկ զուգարաններով, թեքահարթակներով, որոնք նախատեսված են հենաշարժային խախտում/հաշմանդամություն ունեցող աշակերտներին սպասարկելու համար: Հետևապես դպրոցի բոլոր ենթակառուցվածքները կլինեն մատչելի և հասանելի հենաշարժային խնդիրներ ունեցող յուրաքանչյուր աշակերտի համար: Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի: Նախագծով նախատեսվում է 92.4 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր դպրոցի տարածքում: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 168 հատ ֆոտովոլտային վահանակներից: Դպրոցի ջրամատակարարման համակարգը սնվում է դպրոցի տարածքից մոտ 120մ հեռավորության վրա տեղակայված 110 մմ տրամագծով քաղաքային ջրագծից: Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ, համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5 լ/վրկ ելքով, ինչպես նաև սպրինգլերային համակարգ, որը սնվում է բակային տարածքում տեղադրված 2x40 մ³ ջրի ռեզերվուարներից, որոնցում պաշարվում է հրդեհամարման համար անհրաժեշտ ծավալը: Դպրոցի էլեկտրամատակարարումն իրականացվելու նպատակով տարածքում տեղադրվելու է 400 կՎԱ հզորությամբ ենթակայան: Ջեռուցումը նախատեսվում է ապահովել դպրոցի տարածքում տեղակայված կաթսայատնից (7.5մ x 5մ), որտեղ որպես հիմնական վառելիք ծառայելու է բնական գազը՝ մատակարարվելով կաթսաների այրիչների արտաքին ցանցից:

Կաթսայատանը տեղադրվելու են 2 հատ 400 կՎտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ: Տաք ջրամատակարարման համար տեղադրվելու է 1000 լ տարողությամբ 2 ջերմափոխանակիչով ճնշմային ջրատաքացուցիչ բաք, որի ջերմամատակարարումն իրականացվելու է կաթսայից և արևային ջրատաքացուցիչ համակարգից: Կաթսաներն ունեն



ցածր աէրոդինամիկական դիմադրություն, ուստի ծխագազերի քարշը բնական է: Դպրոցի օդափոխության համակարգը նախատեսված է << գործող նորմերին համապատասխան: Նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ, որոնք գործելու են բուֆետի և քիմիայի կաբինետից, հանդիսությունների դահլիճից և մարզադահլիճից: Կանաչապատումն իրականացվելու է ըստ Սպիտակի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի: Նախատեսվող նոր դպրոցի տարածքում ծառեր չկան և տարածքի 52.03 %-ը կամ 9993.2 մ² նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով: Տարածքում նախատեսվում է իրականացնել լայնամաշտաբ կանաչապատման աշխատանքներ՝ շուրջ 242 տարբեր տեսակի ծառերի տնկմամբ, ինչպես նաև իրականացնել սամշիտ, սիզամարգեր և ստեղծել ծաղկանոց:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերեսը՝ 19207,7 մ²,
- կառուցապատման մակերեսը՝ 5265,5 մ²
- կանաչապատման մակերեսը՝ 9993,2 մ²
- բարեկարգման մակերես 3949 մ²

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 25600 մ³, որը ներառում է նաև պահեստավորման ենթակա 8500մ³ բուսահողի ծավալը: Հանված գրունտից 14900 մ³ ծավալն ամբողջությամբ հետլիցք է արվելու՝ տոփանումով և 20 սմ հաստության քայլով: Մնացած 2200 մ³ ծավալով գրունտն իրենից ներկայացնում է փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում, գործունեության ենթակա տարածքի կանաչապատում, որի պահպանման համար նախատեսվում է՝ կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով, նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում՝ նոր ծառատեսակներով փոխարինում: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պատանների օգտագոյությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի



վացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Հողային ռեսուրսների պահպանության համար ձեռնարկվելու են միջոցառումներ, որոնք կբացառեն բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում՝ դրա որակական հատկանիշների վատթարացումը: Հողի բերրի շերտն օգտահանվելու է և պահեստավորվելու է առանձին՝ անջրթափանց թաղանթով, կատարվելու է խախտված հողերի վերականգում, շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային բուսահողն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում, դրանց լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոն կամ մանրախիճ, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոխված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր՝ փոխարինելով նորով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- շենքերի քանդումից շինարարական աղբի առաջացում, որը կօգտագործվի կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ . շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4), որը քանդման արդյունքում և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինաղբն է:

Փորման աշխատանքների արդյունքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 3140110008995 ծածկագրով՝ 2200 մ³:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ընթացքում ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր



ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների վրացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթաման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանում, անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, Սպիտակի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել



Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հասկացված վայր:
3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

[Signature]

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

[Signature]

Հովակիմ Ֆրունզիկյան